

Թիւ 814
Դեկտ. 28, 1959

Մեծայարգ
Տիար Ամիրա Տինիհանեան
Ատենապետ Միսկան Խորհուրդի
Ս. Համբարձում Եկեղեցւոյ
Պրիճփորթ.

Յարգելի Պրն. Տինիհանեան,

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազանի բացակայութեան եւ իր յանձնարարութեամբ այսու կը յայտնենք, թէ ստացուած է Դեկտ. 23 եւ 24 թրուակիր Ձեր նամակները, որով կը տեղեկացնէք թէ Դեկտ. 13ին գումարուած ծխական ժողովին մէջ կատարած էք ծխական Խորհուրդի դադարեալ անդամներու ընտրութիւնը, եւ յուշարկութեան արդիւնքն ու եկեղեցւոյ նիւթական հաշուեկշիռը ներկայացնելով՝ կը խնդրէք ընտրեալ անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Ինչպէս գիտէք, ասկէ առաջ Առաջնորդարանէն Ձեզի ղրկուած էր ծխական տարեկան տեղեկագիրին համար զոյգ օրինակով հարցարաններ: Ըստ հաստատուած կանոնին՝ անհրաժեշտ է որ լեցնէք այդ հարցարանը, եւ մէկ օրինակը Ձեր թղթածրարին մէջ, միւս օրինակը ղրկէք Առաջնորդարան:

Հաճեցէք լեցնել այդ հարցարանը / որմէ զոյգ օրինակներ Ձեզի կը ղրկենք կրկին անգամ ըլլալով / եւ շուտափոյթ ղրկել Առաջնորդարան, որպէս զի Առաջնորդ Սրբազանը ներկայացնէ զայն Թեմական Խորհուրդին առ ի վաւերացումն:

Զայս հղորդելով Ձեզի եւ պատուարժան Միսկան Խորհուրդիդ անդամներուն առ ի գիտութիւն, եւ սպասելով ակնարկուած ծխական տարեկան տեղեկագիրի հարցարանի ստացման.

Մնամ խորին յարգանքօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ Առաջնորդարանի